

**<<Ընդդեմ գենդերային բռնության 2012թ . միջոցառումների ծրագրի>> շրջանակներում << Տավուշի մարզում  
2012թ. կատարված աշխատանքների վերաբերյալ**

**Տեղեկատվություն**

h/h	միջոցառման անվանումը	կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Մարզի հանրակրթական դպրոցների և մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար գենդերային բռնության վերաբերյալ ուսուցողական դասընթացների կազմակերպում:	Իջևանի տարածաշրջանի 3 դպրոցների թվով 100 աշակերտների և Նոյեմբերյան քաղաքի թիվ 1 դպրոցի թվով 100 աշակերտների շրջանում կազմակերպվել են կլոր սեղաններ և քննարկումներ՝ գենդերային բռնության վերաբերյալ:	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	Ծնողների համար „Երեխաների խնամքը և դաստիարակությունը,, թեմայով սեմինար պարապմունքների անցկացում	Մարզի 6 համայնքների ծնողների շրջանում անց են կացվել կարճատև ուսուցողական դասընթացներ՝ երեխաների խնամքի և դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության կարևորության, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ:	Ֆինանսավորում չի պահանջվում
3.	Մարզի հանրակրթական դպրոցներում «Առողջ ապրելակերպ» թեմայով դասընթացի կազմակերպում	Սեպտեմբեր-հոկտեմբերի ընթացքում քաղաքի դպրեցներում անց են կացվել ուսուցողական դասընթացներ՝ „Առողջ ապրելակերպ և ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքներ,, թեմայով:	Ֆինանսավորում չի պահանջվում
4.	Հանցագործությունների կանխարգելման պետական հայեցակարգի պահանջների համաձայն մարզում անչափահասների շրջանում իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում	Կազմակերպվել են գենդերայի բռնության վերաբերյալ դասընթացներ Իջևանի տարածաշրջանի 3 հանրակրթական դպրոցների անչափահասների շրջանում:	Ֆինանսավորում չի պահանջվում